ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար տպագրական և առաքման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՇՁԲ-18/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «08» նոյեմբերի, 2018թ.

Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Ավետիք Ավագյան՝ ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի անդամներ՝

Հովհաննես Ստեփանյան՝ ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Կարեն Մելքոնյան՝ ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Արմինե Ալիխանյան՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթ նստավայրի պատասխանատու,

Լիլիթ Հովհաննիսյան՝ ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի քարտուղար՝

Օֆելյա Ասատրյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

1. Տեղեկատվություն՝ հայտերի գնահատման արդյունքների հաստատման վերաբերյալ.

Ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 20-րդ կետով սահմանված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունը՝ հանձնաժողովը որոշեց «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի մասնակցության իրավունքը գնահատել բավարար, հաստատել հայտերի գնահատման արդյունքները և

-1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից հայտարարել «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող անձնաժողովը որոշեց՝

- հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է),
- գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ավետիք Ավագյան

Անդամներ՝

Հովհաննես Ստեփանյան

Կարեն Մելքոնյան

Արմինե Ալիխանյան

Լիլիթ Հովհաննիսյան

Քարտուղար՝ Օֆելյա Ասատրյան